ՀՖՖ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2016

2015/2016 մրցաշրջան

ՀՖՖ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2016

2015/2016 մրցաշրջան

ՀՖՖ Արտոնագրման բաժին

Օգոստոս 2016թ.

Հարգելի բարեկամ,

Ձեզ է ներկայացվում Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի ակումբների արտոնագրման և վերահսկողության համակարգի՝ թվով չորրորդ համեմատական վերլուծությունը, որն ամփոփում է 2015/2016 թվականների մրցաշրջանն ու ընդգրկուն տեղեկատվություն պարունակում:

ՀՖՖ ակումբների արտոնագրման և վերահսկողության համակարգի գործունեությունը ներառում է արտոնագրման վերահսկողության գործընթացն ու արդյունքները, մարզչական որակավորման դասընթացներն ու շնորհված արտոնագրերը, ինչպես նաև ենթակառուցվածքային չափանիշների ու մանկապատանեկան մարզադպրոցների կարգավիճակի վերահսկողությունն ու ակումբների ֆի-նանսական բնութագիրը:

Ինչպես և նախորդ երեք վերլուծություններում, այստեղ էլ կարող եք գտնել վերոնշյալի վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն, որը Ձեզ հնարավորություն կընձեռի հստակ պատկերացում կազմել հայկական ակումբային ֆուտբոլի ներկայիս վիճակի վերաբեյալ:

Նմանատիպ վերլուծությունները թույլ են տալիս նոր տեսանկյունից դիտարկել մեր հետագա անելիքները և ակումբային ֆուտբոլի զարգացման ուղիները:

ՀՖՖ Նախագահ

Ռուբեն Հայրապետյան

Հարգելի բարեկամ,

ՀՖՖ Արտոնագրման բաժինը Ձեզ է ներկայացնում ՀՖՖ ակումբների արտոնագրման համեմատական վերլուծության չորրորդ հրատարակությունը 2015/2016 թվականների մրցաշրջանի և 2015 թվականի ֆինանսական տարվա վերաբերյալ: Այն ամբողջապես վերաբերում է հայկական ակումբային պրոֆեսիոնալ ֆուտբոլին՝ իր մեջ ներառելով ՀՀ Բարձրագույն խմբի ակումբների մասին մանրամասն տեղեկատվություն համեմատական կարգով: Այս փաստաթուղթը հրատարակվում է չորրորդ տարին անընդմեջ և շարունակում է հանդիսանալ ամենամյա սկզբունքով հրապարակվող միակ փաստաթուղթը, որը պարունակում է հայկական ակումբների և հայկական ֆուտբոլի վերաբերյալ ֆինանսական, ենթակառուցվածքային, մարզչական, կադրային, իրավական և այլ կարևոր տեղեկատվություն:

Այս զեկույցն իր մեջ ներառում է 2015/2016 թվականների մրցաշրջանի և 2015 թվականի ֆինանսական տարվա ընթաքում հավաքագրված ողջ տեղեկատվությունը, որոնք ակումբները ներկայացրել են ՀՖՖ ակումբների արտոնագրման և վերահսկողության գործընթացի շրջանակներում: Զեկույցում նաև անդրադարձ է կատարվում 2016/2017 թվականների մրցաշրջանի արտոնագրման գործընթացին և արտոնագրային որոշումներին, քանի որ նշված մրցաշրջանի արտոնագրերն ակումբներին շնորհվել են 2015/2016 թվականների մրցաշրջանի ընթացքում:

Վերոնշյալ տեղեկատվությունը չէր լինի հասանելի և ակումբների արտոնագրման համեմատական զեկույցը չէր դառնա իրականություն առանց մեր ակումբների կողմից՝ համապատասխան աջակցություն և պատրաստակամություն ցուցաբերելու: Այդ առումով մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում ՀՀ Բարձրագույն խմբի բոլոր ակումբներին իրենց աջակցության և սույն զեկույցի կազմմանը մասնակցություն ցուցաբերելու համար:

Վստահ ենք, որ ՀՖՖ ակումբների արտոնագրման համեմատական վերլուծություն զեկույցը կոչված է բարձրացնելու և ավելացնելու հայկական ֆուտբոլում առկա թափանցիկության մակարդակը, ինչը հանդիսանում է ՀՖՖ քաղաքականության անկյունաքարերից մեկը:

ՀՖՖ Արտոնագրման բաժնի պետ
Արթուր Ազարյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ 9

ԳԼՈՒԽ 2. ՀԱՃԱԽԵԼԻՈՒԹՅՈՒՆ.....15

ԳԼՈՒԽ 3. ՀՖՖ ՄԱՐԶՉԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ԵՎ ՄԱՐԶՉԱԿԱՆ ԱՐՏՈՆԱԳՐԵՐ..... 25

ԳԼՈՒԽ 4. ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐ, ԼԵԳԻՈՆԵՐՆԵՐ 27

ԳԼՈՒԽ 5. ՄԱՐԶԱԴԱՇՏԵՐ 33

ԳԼՈՒԽ 6. ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ 35

adidas
21
21

ԳԼՈՒԽ 1. ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Արտոնագրման գործընթաց

Ակումբների արտոնագրման և վերահսկողության գործընթացը 2015/16 մրցաշրջանում կազմակերպվել է նույն այն սկզբունքներով, որոնք որդեգրվել էին 13 տարի առաջ: Ներկայացված վերլուծությունը պարունակում է ՀՖՖ Ակումբների արտոնագրման համակարգին վերաբերող բազմակողմանի տեղեկատվություն: Վերլուծությունը կատարվել է ՀՖՖ ակումբների կողմից ներկայացված արտոնագրման հիմնական չափանիշների՝ մարզական, կադրային և վարչական, իրավական և ենթակառուցվածքային, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությանը վերաբերող տեղեկատվության հիման վրա:

Հաշվետվության առաջին հատվածում Դուք կարող եք տեղեկանալ նախորդ 13 մրցաշրջանների ընթացքում ՀՖՖ Ակումբների արտոնագրման գործընթացի մասին տեղեկատվությանը, կայացված որոշումների համեմատություններին: Մրցաշրջանի ընթացքում ակումբները դիմում են թե՛ ազգային ու թե՛ ՈւԵՖԱ-ի արտոնագիր ստանալու համար: Առաջին դեպքում ակումբը հնարավորություն է ստանում մասնակցել ներքին առաջնությանը, իսկ երկրորդում՝ Եվրոպական ֆուտբոլի գերատեսչության կողմից կազմակերպված երկու մրցաշարերին:

Վերլուծության հիմնական հատվածը վերաբերում է 2015/16 մրցաշրջանին, ինչպես նաև 2015 ֆինանսական տարվան: Քանի որ արդեն որոշում է կայացվել 2016/2017 մրցաշրջանի արտոնագրերի շնորհման վերաբերյալ, ընթերցողը հնարավորություն ունի գտնել տեղեկատվություն նաև արդեն մեկնարկած այդ մրցաշրջանի մասին: Ազգային և ՈւԵՖԱ-ի արտոնագիր շնորհվել է դիմած բոլոր 7 ակումբներին:

Մինչ 2016/2017 մրցաշրջանի վերաբերյալ որոշումներ կայացնելը, ՀՖՖ Ակումբների արտոնագրման կոմիտեն հետ կանչեց «Ուլիս» ֆուտբոլային ակումբին շնորհված 2015/2016 մրցաշրջանի ազգային և ՈւԵՖԱ-ի արտոնագրերը: Ակումբը ձախողել էր 2014 թվականի խմբագրության ակումբների արտոնագրման կանոնակարգի ֆինանսական և ոչ ֆինանսական չափանիշների դրույթների իրականացումը: Միևնույն ժամանակ, ՀՖՖ Արտոնագրման բաժինը՝ այդ որոշման հիման վրա դիմել է ՀՖՖ կարգապահական կոմիտե՝ «Ուլիս» ՖԱ-ի նկատմամբ համապատասխան պատժամիջոցներ կիրառելու համար:

FOOTBALL FEDERATION OF ARMENIA
ՀՖՖ
7 Ազգային
արտոնագիր
UEFA
7 ՈՒԵՖԱ-ի
արտոնագիր

2004-2016/2017 մրցաշրջանների ՀՖՖ ակումբների ստացած և մերժված ազգային արտոնագրեր



13

Փյունիկ, Բանանց և Միկա ՖԱ-ները ստացան 13-րդ անընդմեջ ազգային արտոնագրերը

1

Առաջին անգամ գրանցվել է ազգային և ՈւԵՖԱ-ի արտոնագրերի հետ կանչ Ուլիս ՖԱ-ից

2008-2016/2017 մրցաշրջանների ՀՖՖ ակումբների ստացած և մերժված ՈՒԵՖԱ-ի արտոնագրեր



YEREVAN
NOY

ԳԼՈՒԽ 2. ՀԱՃԱԽԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Հաճախելիություն

ՀՖՖ Ակումբների արտոնագրման համեմատական վերլուծություն 2015/2016-ի երկրորդ գլուխը նպատակ է հետապնդում ներկայացնել և վերլուծել 2015/2016 մրցաշրջանի ՀՀ Բարձրագույն, Առաջին խմբի և Գավաթի խաղարկության բոլոր խաղերի հաճախելիությունը՝ ըստ ակումբների անցկացրած տնային հանդիպումների:

Նախորդ, 2014/2015 մրցաշրջանի համեմատ, ՀՀ Բարձրագույն խմբի տնային հանդիպումների հաճախելիության ցուցանիշը բարելավվել է՝ 68400 հանդիսական՝ 58330-ի փոխարեն: Այս արդյունքը, սակայն, զիջում է 2013/2014 մրցաշրջանի ցուցանիշին (75500 մարդ): Նկատենք, որ վերոնշյալ ցուցանիշը չի ներառում «Ուլիս» ՖԱ-ի տնային հանդիպումների հաճախելիության ցուցանիշը, որը հրաժարվեց հետագա պայքարից 15-րդ տուրից հետո: Տնային հանդիպումների հաճախելիության լավագույն արդյունքը երկրորդ տարին անընդմեջ գրանցում է Գանձասար-Կապանը՝ 20500 հանդիսական, ընդ որում՝ 2014/2015 մրցաշրջանի համեմատությամբ, այս թիվը աճել է մոտ 40%-ով: Չնայած երկու անգամ բարելավելով ցուցանիշը նախորդ մրցաշրջանի համեմատությամբ, այս տարի էլ հաճախելիության ամենացածր արդյունքը պատկանում է Արարատին՝ 4250 հանդիսական:

ՀՀ Առաջին խմբի 2014/2015 մրցաշրջանի առաջնության մասնակից թիմերի տնային հանդիպումների հանդիսականների ընդհանուր թիվը նվազել է 10270-ից՝ 9920 հանդիսական: Արդեն երկրորդ տարին անընդմեջ հաճախելիության ցուցանիշը Առաջին խմբում նվազում է՝ 13440 հանդիսական ցուցանիշը գրանցվել էր 2013/2014 մրցաշրջանի ընթացքում: Տնային հանդիպումների հաճախելիությամբ առաջատարը նորից Գանձասար-Կապանն է՝ 1810 հանդիսական ցուցանիշով: Վատագույն արդյունքը Փյունիկ-2-ինն է՝ 1260 հանդիսական:

Աճ է գրանցվել ՀՀ Գավաթի խաղարկության հաճախելիության ցուցանիշներում: Եթե 2014/2015 մրցաշրջանի ընթացքում գավաթային հանդիպումներին ընդհանուր առմամբ ներկա է եղել 8800 հանդիսական, ապա այս անգամ ցուցանիշը կազմում է 9500 հանդիսական: 2010 թվականի մրցաշրջանի Գավաթի խաղարկության համեմատությամբ, հանդիսատեսների մոտ հետաքրքրությունը նվազել է գրեթե երկու անգամ:

2015/2016 մրցաշրջանի ՀՀ Բարձրագույն խմբի առաջնության հաճախելիություն





ՀՀ Բարձրագույն խմբի առաջնությունների հաճախելիություն 2010 - 2016 մրցաշրջաններում



2012/2013
11.5410

2015/2016
68.400

ՀՀ Բարձրագույն խմբի մարզադաշտերի տարողությունն ու միջին այցելությունը 2015/16 մրցաշրջանի ընթացքում



2015/2016 մրցաշրջանի ՀՀ Առաջին խմբի առաջնության հաճախելիություն





ՀՀ Առաջին խմբի առաջնությունների հաճախելիություն 2010- 2015/2016 մրցաշրջաններ



2015/2016 մրցաշրջանի ՀՀ Գավաթի խաղարկության հաճախելիություն





ՀՀ Գավաթի խաղարկությունների հաճախելիություն 2010 - 2015/2016 մրցաշրջաններ





ԳԼՈՒԽ 3. ՀՖՖ ՄԱՐԶՉԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ԵՎ ՄԱՐԶՉԱԿԱՆ ԱՐՏՈՆԱԳՐԵՐ

ՀՖՖ Մարզչական դասընթացներ և մարզչական արտոնագրեր

2015-16 թվականներին ՀՖՖ Արտոնագրման բաժինը մեկնարկեց ՈՒԵՖԱ-ի Պրո կարգի մարզչական արտոնագրման թվով երկրորդ դասընթացը: Սկզբնական փուլում նախատեսված «Ֆուտբոլային փիլիսոփայություն և ուսում», ինչպես նաև «Առաջնորդություն և հռետորաբանություն» ընդհանրական թեմաների քննարկումից հետո, Պրո կարգի արտոնագրի ուսանողները անցան ավելի նեղ մասնագիտական «Խաղային ոճերի և տակտիկայի էվոլուցիա ֆուտբոլում», «Խաղային կազմակերպվածության արդիական միտումները» ու «Կոնֆլիկտի կառավարում» մոդուլներին:

2016 թվականի մարտ և ապրիլ ամիսներին դասընթացի շրջանակներում 13 ուսանողները այցելեցին գերմանական Դորտմունդ և ֆրանսիական Մոնպելյե քաղաքները, որտեղ հնարավորություն ունեցան անմիջականորեն ծանոթանալ եվրոպական կայացած ֆուտբոլային ակումբների ամենօրյա գործունեությանը:

«Բորուսիա» Դորտմունդ և «Մոնպելյե» ակումբներում հայ մարզիչները հնարավորություն ունեցան շփվելու գործադիր և մարզական ղեկավարության հետ, ծանոթանալ մանկապատանեկան դպրոցի աշխատաոճին, ակումբների ֆուտբոլային ենթակառուցվածքներին, իսկ թիմերի գլխավոր մարզիչները կիսվեցին իրենց բազմամյա փորձով:

Դասընթացի ավարտական քննությունները նախատեսված են 2016 թվականի սեպտեմբերին:

Սեպտեմբերին նախատեսված է նաև ՈՒԵՖԱ-ի Բ կարգի մարզչական արտոնագրի դասընթացի մեկնարկը:

Ծրագրին մասնակցելու ցանկություն է հայտնել 27 դիմորդ:

ԳԼՈՒԽ 4. ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐ, ԼԵԳԻՈՆԵՐՆԵՐ

Ֆուտբոլիստներ և լեգիոներներ

Հաշվետվության այս հատվածում ներկայացված են ՀՀ Բարձրագույն և Առաջին խմբի առաջնություններում ակումբների թիմերի կազմում հանդես եկած ֆուտբոլիստների համեմատական վերլուծությունը: 2015/2016 մրցաշրջանի ՀՀ Բարձրագույն խմբի առաջնությանը մասնակցել է 241 ֆուտբոլիստ՝ նախորդ մրցաշրջանում մասնակցած 264-ի փոխարեն: Ամենաերիտասարդ կազմն ուներ Բանանց ՖԱ-ն, որի ֆուտբոլիստների միջին տարիքը կազմում էր 22.89 տարեկան: Ամենատարեց կազմը ներկայացրել էր չեմպիոն հռչակված Ալաշկերտ ՖԱ-ն՝ 26.89 տարեկան: ՀՀ Բարձրագույն խմբի առաջնությանը մասնակցած բոլոր ֆուտբոլիստների միջին տարիքը կազմել է 24.79 տարեկան: Երիտասարդ ֆուտբոլիստներին ամենաշատը վստահում են Փյունիկն ու Արարատը. նշված ակումբների առաջին թիմերի կազմում առաջնությանը մասնակցել են 19 տարեկանը չբոլորած վեցական ֆուտբոլիստ:

2015/2016 մրցաշրջանի ՀՀ Առաջին խմբի առաջնությանը մասնակցել է 220 ֆուտբոլիստ (246 ֆուտբոլիստ՝ 2014/2015 մրցաշրջանում): Ամենաերիտասարդը կրկին Բանանց ՖԱ-ն է. ակումբի Բանանց-2 թիմի միջին տարիքը կազմում է 19.19 տարեկան: ՀՀ Առաջին խմբում հանդես եկած ֆուտբոլիստների միջին տարիքը կազմում է 20.82 տարեկան:

Ներկայացված են նաև ՀՀ Բարձրագույն և Առաջին խմբի առաջնություններում ակումբների թիմերի կազմում հանդես եկած լեգիոներ ֆուտբոլիստների քանակը: Բարձրագույն խմբում հանդես է եկել 57 լեգիոներ: Միկա ՖԱ-ի կազմում 2015/2016 մրցաշրջանի համար հայտավորված է եղել 17 լեգիոներ՝ ամենաբարձր ցուցանիշը 7 ակումբների շարքում: Առաջին խմբում հանդես է եկել ընդամենը 3 լեգիոներ. 2-ը՝ Ալաշկերտ-2, 1-ը՝ Փյունիկ-2-ի կազմում:

ՀՀ Բարձրագույն խմբի 2015/2016 մրցաշրջանի ֆուտբոլիստների վիճակագրությունը



2015/2016 մրցաշրջանի ՀՀ Բարձրագույն խմբի թիմերի ֆուտբոլիստների միջին տարիքը



2015/2016 մրցաշրջանի Բարձրագույն խմբի ֆուտբոլիստների միջին տարիքը՝
24.79 տարեկան

ՀՀ 2015/2016 մրցաշրջանի Առաջին խմբի թիմերի ֆուտբոլիստների վիճակագրություն



FC BANANTS
FC BANANTS
SPORT

ԳԼՈՒԽ 5. ՄԱՐԶԱԴԱՇՏԵՐ

2015/2016 մրցաշրջանում հայտավորված հիմնական և պահեստային մարզադաշտեր

	Հիմնական	Պահեստային
Ալաշկերտ	Նաիրի մարզադաշտ	Հանրապետական մարզադաշտ
Արարատ	Հրազդան մարզադաշտ Հանրապետական մարզադաշտ	Քասախի մարզիկ
Բանանց	Բանանց մարզադաշտ	Բանանց արհեստական խոտածածկով խաղադաշտ
Գանձասար-Կապան	Կապանի քաղաքային մարզադաշտ	Կապանի արհեստական խոտածածկով խաղադաշտ
Միկա	Միկա մարզադաշտ	Աբովյանի քաղաքային մարզադաշտ
Շիրակ	Գյումրիի քաղաքային մարզադաշտ	Գյումրիի ֆուտբոլի ակադեմիայի արհեստական և բնական խաղադաշտեր
Փյունիկ	Ֆուտբոլի ակադեմիա մարզադաշտ	Ֆուտբոլի ակադեմիայի արհեստական խոտածածկով խաղադաշտ
Ուլիս	Հանրապետական մարզադաշտ	Քասախի մարզիկ

ԳԼՈՒԽ 6. ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

Եկամուտներ և ծախսեր

Ֆինանսական տարվա ամփոփումից հետո հայկական ակումբները՝ ՀՖՖ Ակումբների արտոնագրման կանոնակարգի (2015թ. խմբագրություն) ֆինանսական չափանիշի պահանջներին համաձայն, անցնում են ֆինանսական աուդիտ: Ֆինանսական չափանիշի հիմնարար պահանջներից է համարվում ակումբների տարեկան ֆինանսական, եկամուտների և ծախսերի մասին հաշվետվությունների ներկայացումը:

Ակումբների ֆինանսական չափանիշների գնահատման համար ակումբները ներկայացնում են 4 հիմնական բնույթի ծախսեր, այն է՝ ծառայությունների և նյութերի արժեքներ, աշխատավարձեր ու սոցիալական հարկեր, մաշվածություն և ամորտիզացիա, այլ գործառնական ծախսեր:

Ինչ վերաբերում է ակումբների ստացած եկամուտներին, ապա դրանք ներկայացվում են 5 հիմնական աղբյուրների տեսքով՝ ՈՒԵՖԱ-ից ստացած պարգևավճարներն ու համերաշխության գումարները, հովանավորություն և գովազդ, հեռարձակում, կոմերցիոն և այլ գործող եկամուտները: Հաշվապահական հաշվեկշիռը ներառում է տեղեկատվություն ակումբների ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի վերաբերյալ:

Ֆինանսական չափանիշի պատշաճ իրագործումը պարտադիր պահանջ է՝ ՈՒԵՖԱ-ի մրցաշարերին մասնակցելու արտոնագիր ստանալու համար: Արտոնագիր ստանալու հայտ ներկայացրած բոլոր ակումբները բարեհաջող անցել են քննությունը:

Ծախսեր 2015 ֆինանսական տարի



- ✓ 2015 ֆինանսական տարվա ընթացքում ՀՀ Բարձրագույն խմբի ակումբների ծախսերը հիմնականում ուղղված են եղել գործառնական գործառույթների կազմակերպմանը:
- ✓ Վարձու աշխատողներին տրվող աշխատավարձերի և հարկերի համար Բարձրագույն խմբի ակումբները 2015 ֆինանսական տարվա ընթացքում ընդհանուր առմամբ ծախսել են 388,425,000 դրամ

Եկամուտներ 2015 ֆինանսական տարի



- ✓ 2015 ֆինանսական տարվա ընթացքում ակումբները հեռուստահեռարձակումներից եկամուտ չեն ունեցել
- ✓ Եկամուտի հիմնական բաժինը գոյանում է ՈՒԵՖԱ-ի պարգևավճարներից ու համերաշխության գումարներից
- ✓ Եկամուտի մյուս հիմնական աղբյուրը հովանավորչական պայմանագրերից ու գովազդից ստացված գումարն է

Հաշվապահական հաշվեկշիռ 2015 ֆինանսական տարի



Հեղինակ՝

Վահան Ղարիբյան	ՀՖՖ Արտոնագրման բաժնի պետի տեղակալ

«ՀՖՖ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2016» - ի ստեղծմանը նպաստել են՝

Արմեն Մինասյան	ՀՖՖ Առաջին փոխնախագահ և Գործադիր տնօրեն, ՀՖՖ Ակումբների արտոնագրման համակարգի և վերահսկողության գործընթացի նախագծի ղեկավար

ՀՖՖ Արտոնագրման բաժին՝

Արթուր Ազարյան	ՀՖՖ Արտոնագրման բաժնի պետ
Ղազար Հակոբջանյան	ՀՖՖ Արտոնագրման բաժնի մասնագետ, ՀՖՖ Մարզչական կրթության ծրագրի համակարգող

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ

Արտոնագրման բաժին

Հասցե՝	Խանջյան 27, Երևան, 0010, Հայաստան
Հեռ.՝	+37410541069
Ֆաքս՝	+37410547173
Էլ. փոստ՝	licensing@ffa.am
Կայք՝	www.ffa.am